

ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԵՔՐԱՅԵՐԵՆ ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ

Մատենադարանի այլալեզու ձեռագրերի հավաքածուի մեջ երբայերեն ձեռագրերը մեծաքանակ չեն և որպես գիտական ուսումնասիրության նյութ առանձնակի հետաքրքրություն չեն ներկայացնում, քանի որ հիմնականում ընդօրինակումներ են Հնգամատյանի և Եսթերի գրքի, կան նաև հմայիլներ: Բացառություն է կազմում հ^մ 148 ձեռագիրը, որը Հնգամատյանի մեկնությունն է, կոչվում է «Պսակ գրոց», երբայերեն՝ **הַרְוֵת רְוֵת** (Կետեռ Տոռա), որի բնօրինակը Փոքր Ասիայի Նիկոմեդիա գավառում XIV դարում գրել է Ահարոն բեն էլիյահը (1300-1369 թթ.), իսկ Մատենադարանում պահվող ընդօրինակությունը պատկանում է XVIII դարին, գրիչ՝ Մոշե բեն Աբրահամ: Ձեռագիրն ընդգրկում է Հնգամատյանի «Ծնունդք», «Ելք», «Ղեւտական», «Թիւք» գրքերի՝ ընդհանուր թվով 34 մասերի մեկնությունները: Մատենադարանի երբայերեն ձեռագրերի բովանդակությանը սույն պարբերականում համառոտ անդրադարձել ենք երբայերեն ձեռագրացուցակի վրա մեր հիմնական աշխատանքն ավարտելուց անմիջապես հետո¹: Երբայերեն ձեռագրերի ու պատառիկների կողքին ուշագրավ են հատկապես հայերեն մի շարք ձեռագրերում զետեղված երբայերեն պատառիկ-պահպանակները, որոնց մեծ մասի գրչության վայրերի հիշատակումները մեզ թույլ են տալիս բացահայտել XV-XVIII դարերում հայհրեական փոխհարաբերությունների որոշ դրվագներ:

Երբայերեն պատառիկ-պահպանակներ ունեն հայերեն ՄՄ 5402, 8140, 8211, 6838, 6868, 7597, 8442, 7825, 7675, 8496, 7414 ձեռագրերը, որոնցից յոթի գրչության վայրը Ղրիմն է, մասնավորաբար՝ Կաֆան և Ղարասուն: Կաֆայի ձեռագրերից ՄՄ 8140, 7597, 7825, 7675, 8496-ը գրել ու ծաղկել է Գևորգ երեցը, ՄՄ 7414-ի գրիչը Աստվածատուր երեցն է, ծաղկողն ու կազմողը՝ Խասպեկ քահանան, իսկ Ղարասունում գրված ՄՄ 8442 ձեռագրի գրիչը Հովհաննես արեղան է: Մնացած չորս ձեռագրերի գրչության վայրերն են. ա) ՄՄ 5402 - Խիզան, գրիչ՝ Մկրտիչ, բ) ՄՄ 8211 - Շուշու գյուղ (Աղվանից աշխարհ), գրիչ՝ Մանուել, գ) ՄՄ 6868 - Ալիկուռնա (Լիվոռնո, Իտալիա), գրիչ՝ Գևորգ երեց, դ) ՄՄ 6838 - գրչության վայրը հայտնի չէ: Նշյալ ձեռագրերը գրված են XV-XVIII դդ., բովանդակում են Ավետարան, ժամագիրք, Տոնացույց, ժողովածու, Ճաշոց, Գանձարան:

¹ Տե՛ս Ռ. Պողոսյան, «Մատենադարանի երբայերեն ձեռագրերի հին հավաքածուի համառոտ նկարագիր», *Բանբեր Մատենադարանի*, 18, եր., 2008, էջ 341-347:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Գևորգ երեցի գրչին պատկանող վեց ձեռագրերի պատառիկ-պահպանակները պարունակում են հատվածներ եզեկիելի և Երեմիայի մարգարեություններից, Դավթի սաղմոսներից, գրիչ Մանուելի ձեռագիրը՝ «Երկրորդումն օրինաց» գրքից, իսկ Աստվածատուր երեցի և Խասպեկ քահանայի ձեռագրի պատառիկ-պահպանակը ընդօրինակություն է Միշնայի «Նեղարիմ» գրքից: Մնացած երեք պատառիկ-պահպանակներն անընթեռնելի են՝ գրադաշտը վնասված լինելու պատճառով:

Ղրիմում գրված հայերեն յոթ ձեռագրերի երբայերեն պատառիկ-պահպանակները մեզ թելադրում են տեղեկություններ քաղել միջնադարյան Ղրիմում ապրած ժողովուրդների մասին, հասկանալու համար, թե ի՞նչ փոխհարաբերություններ են նրանք ունեցել այդ գաղթօջախի քաղաքական, հասարակական ու գիտամշակութային կյանքում: Միանգամից ասենք, որ XIII-XVIII դարերում Կաֆան գրչության խոշոր կենտրոն է եղել ոչ միայն հայերի, այլ նաև հրեաների համար, սակայն այս երկու ժողովուրդների առնչությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել ո՛չ հայկական, եւ ո՛չ էլ հրեական աղբյուրներում: Այդ իսկ պատճառով միջնադարյան Կաֆայում տարբեր ժողովուրդների առնչությունների մասին բավարար պատկերացում կազմելու համար ուսումնասիրողներն օգտվել են այլալեզու աղբյուրներից: Փորձենք որոշ տվյալներ քաղել Ղրիմահայ գաղութի պատմության վերաբերյալ ուսումնասիրություններից:

Վ. Միքայելյանը, հղում անելով թուրքական աղբյուրներին, գրում է, որ XV դարում Կաֆայի 70 հազար բնակչության 65 տոկոսը հայեր էին, 15 տոկոսը՝ հույներ, հրեաներ, թաթարներ և միայն 4 տոկոսը՝ ջենովացիներ²: Հրեաների մասին, անշուշտ, նա ակնարկում է միայն տարբեր ոլորտներում հայերի ներկայության ու դերակատարման մասին խոսելիս: Այսպես օրինակ, Ղրիմահայ գաղութում տարածված զբաղմունքները թվարկելիս նա առաջին հերթին առանձնացնում է այգեգործությունը, շեշտելով, որ Կաֆայի բնակիչները՝ հայերն ու հույները, ինչպես նաև կարայիմ հրեաները, մշակում էին պտղատու և խաղողի հիանալի այգիներ³: Թաթար և թուրք իշխանների կեղեքումների, կողոպուտների մասին հաղորդելիս հեղինակն ընդգծում է, որ հայերից, հույներից ու հրեաներից տուրքեր էին գանձվում ոչ միայն խանական գանձարանի, այլ նաև պաշտոնյաների օգտին. «Հրեա ռաբբի Ազարիան իր թողած երբայերեն ձեռագրում հաղորդում է, որ Շահին-Գիրեյը հրամայել էր խանական գանձարան լրիվ չափով մուծել թե՛ այլադավաններից, թե՛ թաթարներից գանձվող հարկերը»⁴:

² Վ. Միքայելյան, Ղրիմ հայկական գաղութի պատմություն, Եր., 1964, էջ 102:

³ Նույն տեղում, էջ 201:

⁴ Նույն տեղում, էջ 214:

Օտար աղբյուրները վկայակոչելով Վ. Միքայելյանը գրում է, որ Կաֆայի պաշտոնյաները մշտական թշնամանք են տածել միմյանց հանդեպ, ձգձգել են գործերը, կաշառքներ վերցրել, իսկ վեճերը հանգուցալուծել են ջենովացիների օգտին: 1455 թ. Ջենովա ուղարկած իրենց խնդրագրերում Կաֆայի հայերն ու հրեաները հայտնել են, որ ջենովացի պաշտոնյաներն իրենց վերաբերվում են թշնամաբար եւ ատելությամբ⁵:

Խաչգուռի տարեգրության մեջ հիշատակված է ծանր հարկատվության մի դեպք, երբ օսմանյան իշխանությունները 1657-ին կաֆացիներից՝ հայերից, հուլյներից, հրեաներից ու թաթարներից ոչ միայն դրամ են պահանջել, այլ նաև կոռային աշխատանքի համար «ըրդատ» եւ «երկաթ բանող» մարդիկ⁶:

XV դարում Կաֆայում քաղաքական դրությունը բարդացել է տարբեր ժողովուրդների միջև ծագած հակասությունների պատճառով: Համայնքի ներքին գործերը վարելու համար զրիմահայերը Լվովի հայերին խնդրել են թաթարերեն թարգմանել Մրիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ մասի աշխարհիկ օրենքները⁷: Այդ թարգմանությունը զրիմահայերի համար շափազանց կարևոր է եղել այն իմաստով, որ թաթարները և թերակղզու մյուս ժողովուրդները՝ մասնավորապես թաթարերեն խոսող հուլյներն ու կարայիմ հրեաները, կարողանային հասկանալ ու հարգել հայկական սովորություններն ու օրենքները:

Ղրիմի հրեաներին բավականին յուրատիպ է նկարագրել Հ. Տեր-Աբրահամյանը. «Խրիմու աչքաբաց ժողովուրդներէն մէկը կհամարուին Հրեաները, որ ինչպէս ամենայն տեղ, նոյնպէս եւ Տաւրիկեան կուսակալութեան մէջ իւրեանց առանձին բնաւորութեամբն ու սովորութիւններովը խորշիկ երեւցած են ուրիշ ազգերուն: Սոցա մէկ ցեղը որ Գարայիմ կասուի, եւ Քրիստոսի Մննդենէն յառաջ բաժանուած է իւր բնիկ ազգէն, Սուրբ Գիրք կամ Աստուածաշունչը միայն կընդունի, եւ չհաւատար Թալմուդի խօսքերուն ու ռաբբիներու գրուածոցը, որ միւս Հրեայքը գրեթէ Աստուածաշնչին հաւասար կընդունին, եւ այն պատճառաւ է, կասեն, որ Գարայիմ, այսինքն եբրայեցոց լեզուով Ս. Գիրք ընդունող կոչուել են: Գարայիմներն ընդհանրապէս միւս Հրեաներէն շատ աւելի մաքուր, միաբանասէր ու մարդասէր են, բնութեամբ քաղցր եւ ըստ երեւութին՝ անկեղծ: Վաճառականութեան մէջ Հրէից նման աչքաբաց են, բայց նոցա պէս կեղծաւոր, խորամանկ ու խաբեբայ չեն: Իւրեանց խօսակցութիւնը գլխաւորապէս տաճկերէն, թաթարերէն ու ռուսերէն բառերով խառնուած, գրելու ժամանակ եւս յիշեալ ազգաց բառերը կգործածեն՝ եբրայական գրերով»⁸: Այստեղ հարկ է նշել, որ Հ. Տեր-Աբրահամյանը 1859 թվականին Պետերբուրգից ճանապարհորդել է Ղրիմ, ինչպես ինքն է գրում, շրջել է «հայկական քաղցր յիշատա-

⁵ Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, էջ 262:

⁶ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Եր., 1951, հ. 1, էջ 227:

⁷ Վ. Բաստամյան, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 48:

⁸ Յ. Տեր-Աբրահամյան, Պատմություն Նրիմու, ի Քէդոսիա, 1865, էջ 152:

կարաններով լցուած քաղաքները, գիւղերն ու վանքերը»⁹, և իր ապրածն ու զգացածն ամփոփել է Ղրիմի Խալիպայան վարժարանի մեծանուն բարերար Հարություն Խալիպայանի հովանավորութեամբ հրատարակված ուղեգրութեան մեջ: Նրա հաղորդած տվյալները մեզ հիմք են տալիս ասելու, որ Ղրիմահայերի շփումը եղել է ոչ թե հրեա ռաբբունիների, այլ՝ կարայիմների հետ, որոնց սովորութիւններին Ղրիմահայերը քաջատեղյակ են եղել:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ դեր ու նշանակութիւն է ունեցել Կաֆան հրեաների կյանքում: Կաֆայում հրեական համայնքը ձեւավորվել է XIII դարում՝ Բյուզանդիայից, Պարսկաստանից, Իտալիայից գաղթած հրեաների հոսքից հետո: 1309-ին Կաֆայում կառուցվել է մեծ սինագոգ, որի պահոցում (գեներալում) հետագայում հայտնաբերվել են մեծ թվով եբրայերէն ձեռագրեր: XIV-XV դդ. հրեաների մշակութային կենտրոնն է եղել նաև Սուրխաթը, որտեղ, ինչպես հայտնի է, XIV դարում գոյութիւն են ունեցել հայկական 9 եկեղեցի, փաստ, որ ինքնին վկայում է հայկական մեծ համայնքի գոյութեան մասին:

Գերմանացի ճանապարհորդ Ի. Շպիլբերգերը 1394-1427 թթ. այցելելով Ղրիմ, գրել է, որ Կաֆայում ապրում էին երկու տիպի հրեաներ՝ կարայիմներ ու ռաբբունիներ, որոնք ունեին երկու սինագոգ և շորս հազար տուն¹⁰: Ղրիմում օսմանյան տիրապետութեան շրջանում Կաֆայի հրեական համայնքը հայտնվում է անհամեմատ բարենպաստ վիճակում՝ 1475 թվականից դառնալով Ղրիմի գլխավոր հրեական համայնքը: Հրեաների թիվը հետզհետե ավելանում է ի հաշիվ Կ. Պոլսից գաղթածների, որոնց միջոցով լայն տարածում է ստանում «բյուզանդական հրեաների» ծիսակարգը: Այդ նույն շրջանում Ղրիմ են ներթափանցում Իսպանիայից ու Լիտվայից արտաքսված հրեաները: Կրոնական ծիսակարգերը, էթնիկ ու լեզվական տարբերութիւնները պատճառ են դառնում հրեաների միջև ներքին գոտութեան ու բախման, սակայն Կաֆայի գլխավոր ռաբբինն հաջողվում է հաշտեցնել նրանց՝ մշակելով նոր, համընդհանուր ծիսակարգ, ներառելով ինչպես կաթոլիկների, այնպես էլ Պարսկաստանի եւ Արևելյան Եվրոպայի հրեաների պատարագների կարևոր տարրերը, միաժամանակ շանտեսելով նաև Ղրիմում գրված աղոթքները:

Ղրիմում հրեաների թողած մշակութային ժառանգութեանն, անշուշտ, ձեռագիր մատյաններն են, որոնցից ամենավաղը XIII դարից է: XIV դարում Կաֆայում են ընդօրինակվել հրեական միջնադարյան գրականութեան ականավոր դեմքերից Աբրահամ իբն էգրայի Հնգամատյանի մեկնութիւնը, Ահարոն բեն Էլիյահի «Գան էդեն»՝ «Դրախտ» բնագիրը, որի ընդօրինակութեան վրա պահպանվել է կարայիմների համայնքի որոշման արձանագրութիւնը՝ սինագոգից այն հանելու արգելքի մասին: Իսկույն նկատենք, որ Մատենադարանի հ^մ 148

⁹ Նույն տեղում, էջ ԺԳ:

¹⁰ [www.ru.wikipedia.org/wiki/ караимы](http://www.ru.wikipedia.org/wiki/караимы).

ձեռագրի՝ «Պսակ գրոց»-ի հեղինակը նույնպես Ահարոն բեն էլիյահն է, որն իբրև կարայիմ փիլիսոփա, իրավաբան ու գրող ունեցել է հրեա գիտնական Մայմոնիդեսին հավասարազոր համբավ ու հռչակ:

Այժմ անդրադառնանք զրիմահայ գրիչներին, որոնց մասին վկայություններ կան XIII-XIV դարերի հայկական ձեռագրերի հիշատակարաններում: Խասպեկը՝ Խաչատուր Կաֆայեցին, ինչպես գիտենք, զրիմահայ հայտնի ուսուցիչ Հովհաննես քահանայի սաներից է եղել: Իբրև XVIII դարի նշանավոր տաղասաց նա հիմնականում ապրել ու գործել է Կաֆայում, եղել է գրիչ, ծաղկող, ուսուցիչ: Խասպեկի ժամանակակիցն է Հովհաննես աբեղան՝ Ղարասուի նշանավոր գրիչներից մեկը, որից պահպանվել են բազմաթիվ ձեռագրեր: Յավոք, որևէ հիշատակություն չկա վերոնշյալ վեց ձեռագրերի գրիչ Գևորգ երեցի մասին: Թերեւս պատճառն այն է, որ XVII դարավերջի և XVIII դարասկզբի գրիչ-ծաղկողների արվեստը, ինչպես նշում է Ղրիմի մանրանկարչությունյան խոշոր գիտակ է. Կորխմազյանը, հետզհետե կորցրել է իր յուրօրինակությունը. «ԺԸ դարում Ղրիմի հայերը ևս շարունակում էին ընդօրինակել ու նկարագրել ձեռագրերը, բայց այդ ժամանակաշրջանի մատյաններն ունեին բավական միօրինակ ձևավորում: Դրանք ոչ մասնագետ նկարիչների արհեստավորական աշխատանքներն են: Դա ժամանակի ընդհանուր երևույթ էր: Տպագրական գործի ծավալմանը համընթաց, մանրանկարչական արվեստն իբրև այդպիսին անցյալի գիրկն է անցնում, և դրա վերջին աշխուժացումը ժԷ դարում ժամանակավոր էր: Դրանում որոշակի դեր է խաղացել եվրոպական արվեստի Ղրիմ թափանցած ազդեցությունը»¹¹:

Եվ այսպես, զրիմահայ գրիչներն ու ծաղկողները, հատկապես Գևորգ երեցը, նկատելի հետաքրքրություն են ցուցաբերել եբրայերեն ձեռագրերի հանդեպ: Պետք է ենթադրել, որ նրանք կամ մասամբ ծանոթ են եղել եբրայական գրին, քանի որ պատառիկ-պահպանակները տեղագրված են եբրայական գրապատկերը ճշգրտորեն պահպանելով, կամ էլ՝ հրեա կարայիմների հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալով, ձեռք են բերել այդ պատառիկներն ու նրանց օգնությամբ խնամքով զետեղել են իրենց ձեռագրերում:

Եթե համարենք, որ Լիվոռնոյում գրված հ^մ 6868 ձեռագրի գրիչը նույն Գևորգ երեցն է, ապա կարող ենք ասել, որ զրիմահայ գրիչները սերտ կապեր են ունեցել Իտալիայի հայկական գաղթավայրերի հետ: Հայ գրքի տպագրության պատմությունից հայտնի է, որ Հովհաննես Ջուղայեցին 1644-ին Լիվոռնոյում է տպագրել Դավթի սաղմոսները, իսկ Ոսկան Երևանցին 1670-ին այնտեղ հիմնել է իր սեփական տպարանն ու հրատարակել է «Վարդապետութիւն քրիստոնէական» և «Պարտէզ հոգեւոր» գրքերը: Վենետիկում, Ջենովայում և Լիվոռնոյում այնքան շատ են եղել ջուղայեցիները, որ 1688 թ. Ստեփանոս

¹¹ է. Կորխմազյան, Ղրիմի հայկական մանրանկարչությունը, Եր., 2008, էջ 33:

արք. եպիսկոպոս Ջուղայեցին իր գրություններից մեկը վերնագրել է «Գիր օրհնութեան աստուծուաշէն քաղաքացն Վենետիկ, Ալեկոնոյ եւ Ջենովայ եղեալ քրիստոսասէր եւ բարեպաշտօն ջուղայեցի վաճառականաց, սիրելի եւ հարազատ եղբարց»¹²:

Մ. Ուղուրլյանի հաղորդմամբ, Լիվոնոյում բնակություն է հաստատել 120 հայ, որոնց մեջ բացի ջուղայեցիներից եղել են նաև արեւմտահայեր: Ինչպես Կաֆայում, այստեղ ևս գոյություն է ունեցել բավականին մեծ հրեական համայնք՝ իր ութ հազար անդամներով, որոնց մեծ մասը մեծահարուստ է եղել. «Հրէայք ի Լիվոնոյ մեծամեծ ազատութիւնք վայելած են, որոնց սինակոկայն ի Լիվոնոյ գեղեցկութեամբն եւ ճոխութեամբն Եւրոպայու մէջ երեւելիներէն մին է»¹³: Քանի որ հրեաների մեջ մեծ թիվ են կազմել վաճառականները, ուստի ենթադրելի է, որ նրանք հայերի հետ ունեցել են առևտրային հարաբերություններ. «Յիշատակութեան արժանի է որ բուստ գործելու արուեստն նախ Հայերն մուծին ի Լիվոնոյ, եւ ի Հայոց սկսեալ եւ ուսեալ Հրեայք՝ այսօր անոնց յաջորդքն եղած են հոն»¹⁴, գրում է Մ. Ուղուրլյանը: Լիվոնոյի հրեաներն, անշուշտ, աշխույժ կապեր են ունեցել նաև Ղրիմի հետ:

Այսպիսով, Կաֆայում հայերի և հրեա կարայիմների փոխհարաբերությունների մասին մեր ձեռքի տակ եղած սակավախոս տեղեկությունների հիման վրա կարող ենք փաստել, որ XIII-XVIII դարերում երկու ժողովուրդների համար Կաֆան եղել է գիտություն, գրչություն և առևտրի խոշոր կենտրոն, որտեղ հոգևորականները զբաղվել են կրոնական գրականությամբ, Սուրբ գրոց ընդօրինակություններով, իսկ առևտրականներն ու արհեստավորները՝ այգեգործությամբ, որպեսզի իրենց շուրջը փոքրիկ դրախտ ստեղծելով կարողանային դիմանալ թաթար և թուրք իշխանների գազանաբարո ճնշումներին: Կաֆայում բնակվող երեք հիմնական ժողովուրդները՝ հայերը, հույներն ու կարայիմ հրեաներն ընդգծված հարգանք են տածել միմյանց օրենքների ու սովորությունների հանդեպ: Դրա վառ ապացույցն ազգային օրենքները թաթարերեն թարգմանելու անհրաժեշտության իրողությունն է ինչպես համոզվեցինք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մասնակի թարգմանության օրինակով:

Ամփոփելով երբայերեն պատառիկ-պահպանակների կարճառոտ քննությունը, կարող ենք ասել, որ Ղրիմահայ գաղութը, մասնավորաբար Կաֆայի հայերը, քաղաքական, հասարակական ու գիտամշակութային փոխհարաբերություններ են ունեցել ոչ թե հրեա ռաբբունիների, այլ կարայիմների հետ, որոնք դավանել են հրեադավանության ազանդ համարվող կարայիզմ, իսկ իրենց խոսակցական լեզվում գործածել են հին եբրայերեն բառեր և արտահայտություններ:

¹² Ա. Ալպոյանյան, ՊՀԳ, հ. Բ, էջ 450:

¹³ Մ. Ուղուրլեան, Հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյ նոցա ի Լիվոնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 35:

¹⁴ Նույն տեղում, էջ 45:

Рузан Погосян**Еврейские фрагменты - защитные листы Матенадарана**

В одиннадцати армянских рукописях Матенадарана, в качестве защитных листов вплетены фрагменты еврейских рукописей. Так как большинство, этих рукописей было переписано в Кафе, то следует полагать, что между крымскими армянами и евреями существовало общение. В XV-XVIII вв. Кафа была важным центром расселения не только армянской, но и еврейской диаспоры. Там проживали два рода евреев - караимы и раббаниты, которые явно отличались в религиозном плане. Есть исторические сведения о том, что в Кафе армяне, греки и итальянцы имели культурные и общественные связи с караимами, в жизни которых письменность занимала важное место. Это свидетельствует о том, что еврейские фрагменты-защитные листы Матенадарана вплетены в армянские рукописи с участием караимов. Армянские писцы других скрипториев, проявившие интерес к еврейским рукописям, по всей вероятности, приобрели их посредством крымских армян.

Ruzan Poghosian**The hebrew flyleaves of the Matenadaran**

Eleven Armenian manuscripts of the Matenadaran have flyleaves which are fragments of Hebrew manuscripts. It should be pointed that most of them were written in Kafa, the famous cultural centre for both Armenian and Jewish communities in the XV-XVIII centuries. There were two types of Jews in Kafa, karaites and rabbanits with their specific religious characteristics.

According to historical sources, Armenians, Greeks and Italians of Kafa had good social and cultural relationship especially with karaites. So, we can suppose that Hebrew flyleaves were included in Armenian manuscripts with the assistance of karaites who were well-known for their scriptural traditions.